ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3
"16" դեկտեմբեր 2026թ. N 623-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵԼՔԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով «ՇԻՐԱԿ ԱՎԻԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2026 թվականի փետրվարի 11-ի SA-8314 գրությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 26.02.2026 թվականի թիվ 08/4600-2026 եզրակացությունը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալի 2026 թվականի մարտի 10-ի միջնորդությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի արտոնությունը երկարաձգել հետևյալ ուղղությունով.

«ՇԻՐԱԿ ԱՎԻԱ» ՍՊ ընկերություն (Երևան-Սարատով (UWSG) 14.02.2026թ.-ից 24 ամսով):

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումն Ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

3/16/2026

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան